Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

# Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում

**ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիր**

## Տեղեկագիր

**Թիվ** 17

2025թ. սեպտեմբեր

# Առաջընթացի մեկ ամիսը

Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրով ՄԱԱԶԿ-ը սեպտեմբերին շարունակեց աջակցությունը ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ին (Ստանդարտների և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ) ՝ ուժեղացնելով կարողությունները, խթանելով օրենսդրական բարեփոխումները և ընդլայնելով միջազգային համագործակցությունը: Այս քայլերը կարևոր նշանակություն ունեն Հայաստանի չափագիտական համակարգի զարգացման և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու գործում:

Հայաստանի որակի ենթակառուցվածքի զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը ներառում են լաբորատորիաների հագեցում ժամանակակից սարքավորումներով, մասնագետների վերապատրաստում ԵՄ իրավական չափագիտության կանոնակարգերի թեմայով, գործարանային աուդիտների իրականացում ու փորձի փոխանակում եվրոպական գործընկերների հետ:

## ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը դրական երզակացություն է տվել «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծին:

2025թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը դրական երզակացություն է տվել «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծին:

Ներկայացնելով օրենքում իրականացվող փոփոխությունները՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանը նշել է, որ ընդլայնվել է օրենքի կարգավորման առարկան, սահմանվել են պահանջներ՝ մեծությունների չափման միավորների, չափանմուշների, ստանդարտ նմուշների, չափման միջոցների և մեթոդների պահպանման ու կիրառման վերաբերյալ, ճշգրտվել են մի շարք սահմանումներ և ներդրվել նոր տերմիններ:

Այս փոփոխությունները կնպաստեն պետական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, տնտեսության կարևոր ոլորտներում չափումների արդյունքների նկատմամբ վստահելիության ապահովմանը և օրենսդրական կրկնությունների բացառմանը:

## Սեպտեմբերի 1-ից - 5–ը Մասնագիտացված դասընթաց «Չափածրարված ապրանքների կանոնակարգ» (PPP) թեմայով

ՄԱԱՁԿ-ը կազմակերպել է հնգօրյա ինտենսիվ դասընթաց՝ նվիրված 76/211/EEC չափածրարված ապրանքների կանոնակարգին(PPP): Դասընթացին մասնակցեցին ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի ինը և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (ՇՎՏՄ) երկու աշխատակից: Որոշ դասընթացների մասնակցեցին նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության ներկայացուցիչներ:

Դասընթացը վարեցին Չեխիայի չափագիտության ինստիտուտի (CMI) միջազգային փորձագետները՝ համադրելով տեսական նյութերը գործնական աշխատանքների հետ: Այն կենտրոնացած էր չափածրարված ապրանքների իրավական, տեխնիկական և ընթացակարգային պահանջների շուրջ: Մասնակիցները ծանոթացան նշումների և պիտակավորման պահանջներին, ընդունելի բացասական սխալներին (TNE), նմուշառման և վիճակագրական վերահսկողության մեթոդներին, փաթեթավորման վերահսկողության մեջ չափիչ գործիքների (կշռիչ սարքեր, խտաչափեր) կիրառմանը, ինչպես նաև գործարանային աուդիտների և համապատասխանության ստուգման ընթացակարգերին:

Դասընթացը ներառեց այցելություն տեղական արտադրամաս սուրճի և թեյի արտադրությանն ու փաթեթավորման գործընթացին ծանոթանալու համար: Մասնակիցները կիրառեցին ձեռք բերված իրավական, մասնագիտական և ընթացակարգային գիտելիքները: Դասընթացն ամրապնդեց ոչ միայն ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի և ՇՎՏՄ-ի աշխատակիցների, այլև արտադրողի գիտելիքները՝ հասկանալու և արդյունավետ կիրառելու չափածրարված ապրանքների կանոնակարգի պահանջները:

## Սեպտեմբերի 22-ից – 29–ը ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի փորձագետներն այցելեցին Չեխիայի Հանրապետություն

ՄԱԱՁԿ-ը կազմակերպեց ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ–ի մասնագետների ուսումնական այց Չեխիայի չափագիտության ինստիտուտ (CMI): Հայաստանյան պատվիրակությունը ներկայացնում էին ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի որակի կառավարիչը և երկու լաբորատորիայի ղեկավարները: Այցի ընթացքում մասնագետները ծանոթացան Չեխիայի չափագիտության ինստիտուտի լաբորատորիաների կառավարման, տրամաչափարկման ու հաստատման ընթացակարգերի միջազգային փորձին, ինչպես նաև ԵՄ և միջազգային չափանիշներին համապատասխանող որակի կառավարման համակարգերին : Հատուկ ուշադրություն է դարձվել վառելիքաբաշխիչ աշտարակների տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ տեսական և գործնական դասընթացին, որի հիմքում էին MID կանոնակարգի B մոդուլն ու OIML R117 պահանջները:

## Սեպտեմբերի 24-ից–26–ը Հայաստանը մասնակցեց չափագիտության տարածաշրջանային երկխոսությանը Ուզբեկստանում

ՄԱԱՁԿ-ի աջակցությամբ ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տնօրենի պաշտոնակատար Արմեն Ոսկանյանը մասնակցեց «CIPM MRA-ի մարտահրավերներն ու հնարավորությունները» թեմայով քննարկմանը, որը կազմակերպել էր COOMET-ը-Միջազգային կշռի և չափի բյուրոյի (BIPM) հետ համատեղ: Միջոցառման ընթացքում ՀՀ ներկայացուցիչն երկկողմ հանդիպումներ ունեցավ Ուզբեկստանի չափագիտության ազգային ինստիտուտի ղեկավար կազմի հետ: Քննարկվեցին երկկողմ համագործակցությանը, փորձի փոխանակմանը և չափագիտության լաբորատորիաների զարգացմանը վերաբերող հարցեր:




## Ժամանակակից սարքավորումներ ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի լաբորատորիաների համար

Սեպտեմբերին ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի քիմիական և ուժի լաբորատորիաները համալրվեցին ժամանակակից չափագիտական սարքավորումներով: Այս տեխնիկական արդիականացումը զգալիորեն կուժեղացնի լաբորատորիաների կարողությունները՝ ապահովելովմիջազգային ստանդարտներին համահունչ տրամաչափարկման ծառայությունների տրամադրում:

## Ծրագրի մասին

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային եւ տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան եւ առեւտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

## Ծանոթագրություն

Ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Այս տեղեկագրի բովանդակության պատասխանատուն բացառապես հեղինակներն են եւ այն կարող է չարտահայտել Եվրոպական միության եւ ՄԱԱԶԿ-ի տեսակետները: Այս տեղեկագիրը հրապարակվել է «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Տեղեկագիրը պատրաստվել է առանց Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական խմբագրման:

## Ծրագրի արդյունքները (2025թ. սեպտեմբեր)

**ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի և ՇՎՏՄ 14 աշխատակցի** վերապատրաստում կարողությունների զարգացման դասընթացների արդյունքում

**7,285 դիտում և 1,476 ներգրավվածություն** սոցիալական մեդիայի հարթակներում հրապարակումների արդյունքում



**749 հետևորդ** ծրագրի սոցիալական մեդիայի հարթակներում

**Լրացուցիչ տեղեկության համար դիմել՝**
**Ծրագրի ղեկավար Ցոնգ Վուին, C.WU@unido.org**

**Նորությունների համար հետևեք մեզ՝**

Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից